

# ԻՐԱԿԱԿԱՆ Մշակույթ

Չկա Հասարակությանը  
ստանց իրավունքի  
Ubi societas ibi ius

Երկշաբաթերթ  
թիվ 3 (6)  
2007 թ. մարտի 15

## ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՌԱՍՆԱՄՅԱ ՀԱՆՃԱՐԸ

### Ե Ղ Ի Ն Ե Գ Ա Ր Ե Ն Ց

Մարտի 13-ին լրացավ բանաստեղծի ծննդյան 110-րդ տարին

### Մ Ա Յ Վ Ա Ն Տ Ե Ս Ի Լ

Որպես լքված թավջութակի ձգված մի լար՝  
Դողում է սիրտս կարոտով մի ահարկու.  
Կարոտներիս գագաթն է այն՝ վերջին քնար.-  
Մի պիրկ պարան ու երկնուղեշ փայտեր երկու:  
Որպես բախտիս մուգ քամահրանքը, կամ որպես  
Մի հին խոստում, որ անկատար, դրժած թողի -  
Կախաղանի փայտերն ահա քաղաքի մեջ  
Կանգնել են, սեգ, ու սպասում են կախվողի:  
Կանգնել են, լուռ, իրար կքած, փայտեր երկու,  
Ու մեջտեղում դողում է, մեղկ ու երերուն,  
Մի գորշ պարան, ինչպես տխուր այս օրերում  
Անքոց մորմոքը նախրյան իմ ո՞րք հոգու:  
Իջել է շուրջը մի անհուր իրիկնաժամ,  
Ու լռությու՜ն մի անսովեր, անդուռ, անդող,  
Ինչպես մորմոքը օրերի, ինչպես դաժան  
Մահվան թախիժը՝ իմ անլուր սիրտը բանտող:  
Ու խանութները, գորշ կքած, ու այն մարդիկ,  
Որ հավաքվել են փայտերի շուրջը հիմա,  
Մահվան բեկուն այդ քնարին այդքան մոտիկ -  
Ի՞նչ են ուզում՝ այդքան տխուր ու ակամա:  
Եվ արդյոք ո՞վ է երագել այդքան դաժան -  
Ու լուսավոր առավոտները իմ հոգու  
Ո՞վ դարձրեց - մի անկրակ իրիկնաժամ,  
Ու գորշ պարան, ու երկնուղեշ փայտեր երկու:  
Գուցե այդ է՛ս են, որ սրտով իմ լուսնահար  
Ո՛չ մի կրակ հեռուներից ձեզ չբերի,  
Ու ցանկացա, որ չօրհներգե՜ ո՛չ մի քնար  
Լուսապսակ, պայծառ գալիքը Նաիրի...

Երթամ հիմա: Ու կարոտով անմխիթար,  
Իմ երգիչի երագներով ու հրերով,  
Անհրապույր իմ օրերի երգով մթար  
Ու նախրյան իմ երագի վերջին սիրով,-  
Երթամ մարող ու մարմող իրիկվա մեջ,  
Որպես ուրու հալածական, որպես տեսիլ -  
Տա՛մ պարանոցս կարոտին այն երկնուղեշ  
Ու օրորված՝ եղերական ու անբասիր...  
Թող ո՛չ մի գոհ չպահանջվի ինձնից բացի,  
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան.  
Եվ թող տեսնեն իմ աչքերի մեջ կախվածի  
Իմ բո՛րբ երկիր, լուսապսակ թո ապագան:  
Թող դուրս ընկած իմ աչքերի մեջ կախվածի  
Նոքա տեսնեն պայծառ օրերդ ապագա,-  
Թող ո՛չ մի գոհ չպահանջվի ինձնից բացի,  
Ո՛չ մի սովեր կախաղանին թող մոտ չգա...

1920.6.X



Գործ՝ Մարտիրոս Մարյանի

Ինչ ունեցել է ժողովուրդը թո  
Յու՛մ, անցյալում - լուսավոր ու վեհ,  
Ինչ ունի այսօր, ինչ ցնորք ու խոհ -  
Ո՞րքը հավաքել է թե՛գ է տվել: -  
Տվել է, որ որս այդ ամենը այս  
Օրերին խառնած, խոր հավատքով լի՝  
Պարզես գալիքի ցնորքին անհաս -  
Եվ ընդմիջտ մնա մեծ ու սիրելի: -

### ԽՄՅՄ-Ի ՈՒՅՆ ՆԱԽԿԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 15 ՏԱՐԻ ԱՌԱՋ ԴԱՐՁԱՆ ՄԱԿ-Ի ԱՆՂԱՄՆԵՐ

15 տարի առաջ ԽՄՅՄ-ի ութ նախկին հանրապետություններ՝  
Հայաստանը, Ադրբեջանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Մոլդովան,  
Տաջիկստանը, Թուրքմենստանը և Ուզբեկստանը, մտան ՄԱԿ: 1992  
թվականի մարտի 2-ին Կազմակերպության կենտրոնակայանի առջև բարձրացվեցին այդ  
երկրների պետական դրոշմերը:  
Վրաստանը քաղաքացիական պատերազմի պատճառով ՄԱԿ-ի անդամ դարձավ մի քանի  
ամիս անց 1992 թվականի հուլիսին: Նախկին ԽՄՅՄ-ի մերձբալթյան երեք հանրապետու-  
թյունները՝ Լիտվան, Լատվիան և Էստոնիան, ՄԱԿ-ի ընդունվել տակավին 1991 թվականի սեպ-  
տեմբերին: Իսկ Ռուսաստանը, Ուկրաինան և Բելառուսը 1945 թվականին Կազմակերպության  
հիմնադիրների քվում էին:  
Այսօր ՄԱԿ-ի կազմում կա 192 պետություն:

### ՀՀ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐԸ ՀԱՆԳԻՊԵՑ ՄԱԿ-Ի ԳՆԱԿՎՈՐ ՔԱՐՏՈՂԱՐԻ ԴԵՏ

Մարտի 2-ին՝ Միացյալ ազգերի կազմակերպությանը Հայաստանի անդամակցության 15-  
ամյակի օրը, Նյու Յորքում գտնվող ՄԱԿ-ի կենտրոնակայանում ՀՀ ԱԳ նախարար Վարդան  
Օսկանյանը հանդիպեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան-կի Մունի հետ:  
Ինչպես հայտնել են ԱԳՆ մամուլի և տեղեկատվության վարչությունից, նախարարը  
շնորհավորել է Բան-կի Մունին՝ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի պաշտոնում ընտրվելու  
կապակցությամբ և հավաստել Հայաստանի պատրաստակամությունը՝ իր ներդրումն ունենալ՝  
որպես միջազգային համայնքի լիարժեք անդամ:  
Նախարարը նշել է, որ Հայաստանը արդյունավետորեն է գործակցում Հայաստանում ՄԱԿ-ի  
գանձազան գործակալությունների հետ: Նրա գնահատմամբ, մարդկային զարգացման  
գործակիցն ու հազարամյակի զարգացման նպատակները հիմնարար ուղեցույց են հետագա  
զարգացման համար: Նախարար Օսկանյանը նշել է, որ ՀՀ կառավարության՝ աղքատության  
կրճատման ռազմավարությանը զուգահեռ՝ միջազգային կազմակերպությունների, սփյուռքի և  
երկրի ներքին ռեսուրսների ներգրավմամբ մշակվում է մի նոր ծրագիր, որն ուղղված է լինելու  
գյուղական աղքատության վերացմանը:  
ՀՀ ԱԳ նախարարն ու գլխավոր քարտուղարը քննարկել են Կովկասյան տարածաշրջանում  
վերջին զարգացումներն ու Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման  
ընթացքը: Օսկանյանը ներկայացրել է բանակցությունների ներկա փուլի զարգացումները,  
որի հիմքում Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքն է: Այդ համատեքստում  
նախարար Օսկանյանը բացատրել է, որ ՄԱԿ-ի կամ այլ առայաններում իրականությունը  
մերժող կամ հակառող հայտարարություններ հնչեցնելու ուղղված ջանքերը կվնասեն  
գործընթացին և կհետաձգեն երկարատև կարգավորումը:

### ԵՐԿԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՍ

«Եվրասիա» հիմնադրամը Հայաստանում սկսում է իրականացնել հակակոռուպցիոն  
երկամյա ծրագիր՝ Միավորված ազգերի կազմակերպության ժողովրդավարական ֆոնդի և  
ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ: Ինչպես հիմնադրամից  
հայտնել են «Արմենիաթեյն», ծրագրի նպատակը նպատակն է Հայաստանի պետական կառա-  
վարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների դեմ  
մեծացմանը կոռուպցիայի դեմ պայքարում: Ծրագրի շրջանակներում կազմակերպվելու են  
դասընթացներ, ուսուցողական այցեր, տրամադրվելու են դրամաշնորհներ և ստեղծվելու է հա-  
կակոռուպցիոն ցանց:





Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր - ի (Էջ՝ 8) հ ա վ ե լ Վ ա ծ

Մարդու իրավունքների հայկական դպրոց  
2007թ. հունիսի 25 - հունիսի 4  
ԴԻՍՈՒՄ-ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

«ԻՐԱՎՈՒՆՔ» առարկայաչափ  
ուսուցիչների փորձի փոխանակման III սեմինար-համաժողով  
2007թ. հունիսի 18-19

ՀԱՅՏԱԹԵՐԹԻԿ

1. Ազգանուն, անուն, հայրանուն

1. Ազգանուն, անուն, հայրանուն  
2. Ծննդյան թիվ

Table with 5 columns: Ուսումնական հաստատությունը, Բաժինը, Մասնագիտացումը, Ընդունման տարեթիվը, Ավարտման տարեթիվը

տարին ամիսը օրը

3. Հասցե  
4. Հեռախոս  
էլ. փոստ  
5. Ձբաղմունքը/պաշտոնը  
6. Աշխատավայրի լրիվ անվանումը, հասցեն (մարզը, քաղաքը (ավան, գյուղ)), հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստը.

7. Ինչու՞ եք ցանկանում մասնակցել սեմինար-համաժողովին.

8. Որո՞նք են Ձեր ակնկալիքները համաժողովից.

9. Ի՞նչ կարող եք փոխանցել համաժողովի մասնակիցներին (օրինակ՝ դասավանդման հնտություններ, գիտելիք, փորձ, նոր խաղեր, նորամուծություններ).

10. Ի՞նչ եք նախատեսում ներկայացնել զեկույցին կից. տեսանյութ, նոր մեթոդ, այլ.

Տարի, ամիս, ամսաթիվ  
Շնորհակալություն սեմինար-համաժողովին մասնակցելու ցանկության համար:

Ծանոթություն

Հայտարարեթիվի հետ անհրաժեշտ է ներկայացնել նաև ինքնակենսագրություն (CV), անձնագրի պատճեն:  
Փաստաթղթերը պետք է ներկայացնել ոչ ուշ, քան մինչև 2007թ. ապրիլի 9-ը, հետևյալ հասցեով՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Վանաձոր, Շիրակացու I նրբանցք, թիվ 2  
Հեռախոս՝ (0322) 22967, 44781 ֆաքս՝ (0322) 44781  
էլ. փոստ՝ acrpc@acrpc.am  
Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել կրթության բաժնի վարիչ Արայիկ Պապիկյանին՝  
apapikyan@acrpc.am:

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ-ԵՐԱՆՇԽԱՎՈՐԱԳԻՐ

Հարգելի սուբյեկտ

ՀԱԻԿ-ը բարձր է գնահատում Ձեր օգնությունը դիմորդի գնահատման գործում: Ձեր հաղորդած տեղեկությունները կարևոր հիմք կլինեն դիմորդի ընտրության համար:  
Խնդրվում է լրացված հարցաթղթիկ-երաշխավորագիրն ուղարկել ՀԱԻԿ Մարդու իրավունքների հայկական դպրոց:

- 1.1. Մարզ  
1.2. Քաղաք (գյուղ)  
1.3. Ուս. հաստատության հասցեն  
1.4. Հեռ.  
1.5. էլ. փոստ  
1.6. Տնօրեն

Անուն, հայրանուն, ազգանուն

- 2.1. Դիմորդի/ուսուցչի անունը, ազգանունը  
2.2. Որքա՞ն ժամանակ է աշխատում Ձեր ուս. հաստատությունում  
3. Ըստ Ձեզ՝ որքանո՞վ է անհրաժեշտ դիմորդի՝ Մարդու իրավունքների հայկական դպրոցում ուսանելը

4. Խնդրում ենք բնութագրել դիմորդին՝ որպես մանկավարժի

Table with 6 columns: Հատկանիշը, գնահատական, 1, 2, 3, 4, 5

5. Խնդրում ենք գնահատել դիմորդի հմտությունները հետևյալ հատկանիշներով (5-ն ամենաբարձր, իսկ 1-ն ամենացածր գնահատականն է).

Երաշխավորագիր

Սույնով հաստատում եմ, որ ուսուցիչ/ուսուցչուհի \_\_\_\_\_ անուն, հայրանուն, ազգանուն

Մարդու իրավունքների հայկական դպրոցում սովորելուն զուգահեռ, ինչպես նաև դպրոցն ավարտելուց հետո ոչ պակաս 2 տարի անընդմեջ կդասավանդի «Իրավունք» առարկայաչափը կամ նրանում ընդգրկված որևէ առարկա:

Ստորագրություն Կ.Տ. Տարի, ամիս, ամսաթիվ  
Հարցաթղթիկ-երաշխավորագիրը պետք է ներկայացնել ոչ ուշ, քան մինչև 2007թ. մայիսի 4-ը, հետևյալ հասցեով՝  
Հայաստանի Հանրապետություն, ք. Վանաձոր, Շիրակացու I նրբանցք, թիվ 2  
Հեռախոս՝ (0322) 22967, 44781 ֆաքս՝ (0322) 44781 էլ. փոստ՝ acrpc@acrpc.am; apapikyan@acrpc.am

2. Ծննդյան թիվ

տարին ամիսը օրը

3. Հասցե

4. Հեռախոս

Ֆաքս

էլ. փոստ

5. Կրթությունը

Table with 4 columns: Հրավիրող կազմակերպությունը, Դասընթացի/սեմինարի անվանումը, Սկիզբը, Ավարտը

6. Աշխատավայրի լրիվ անվանումը, հասցեն (մարզը, քաղաքը (ավանը, գյուղը), հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստը

7. Նախկինում իրավական ոլորտի ի՞նչ դասընթացների, սեմինարների եք մասնակցել

8. Ի՞նչն է ձեր դիմումը: Ի՞նչ եք ակնկալում Մարդու իրավունքների հայկական դպրոցից (շարադրել հանգամանորեն, անհրաժեշտության դեպքում՝ կարելի է ավելացնել լրացուցիչ թերթ)

9. Իրավական ոլորտի ի՞նչ հարցեր են Ձեզ առավելապես հետաքրքրում

10. Չեր պատկերացմամբ՝ ո՞րն է ա) Մարդու իրավունքների կրթության անհրաժեշտությունը

բ) Քաղաքացիական հասարակության մեջ անհատի դերը

գ) Պետության գերազույն նպատակը

Անհրաժեշտ է վերոհիշյալ կետերից մեկի վերաբերյալ ներկայացնել մինչև կես էջ ծավալով աշխատանք (եսսե):

11. Ի՞նչ հանգամանքներ կարող են խոչընդոտել մեկայան դասընթացին Ձեր կանոնավոր հաճախելուն

12. Ունե՞ք, արդյոք, որևէ առանձնահատուկ (օրինակ կենցաղային, առողջական և այլն) կարիք կամ պայման, որոնք կցանկանայիք, որ հաշվի առնվեր Ձեր ուսման ընթացքում:

Տարի, ամիս, ամսաթիվ

ստորագրություն

Ծանոթություն

Դիմելու համար անհրաժեշտ է լրացնել դիմում-հարցաթղթիկ, ներկայացնել ինքնակենսագրություն (CV), հարցաթղթիկ-երաշխավորագիր՝ ուսումնական հաստատության ղեկավարի կողմից, դիմումի պատճեն և մեկ լուսանկար:  
Փաստաթղթերը պետք է ներկայացնել ոչ ուշ, քան մինչև 2007թ. մայիսի 4-ը, հետևյալ հասցեով՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Վանաձոր, Շիրակացու I նրբանցք, թիվ 2  
Հեռախոս՝ (0322) 22967, 44781 ֆաքս՝ (0322) 44781  
էլ. փոստ՝ acrpc@acrpc.am; apapikyan@acrpc.am:  
Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել կրթության բաժնի վարիչ Արայիկ Պապիկյանին՝ apapikyan@acrpc.am:

# ԱՐՄԵՆ ԱՇԻՐԱՅՅԱՆ

ՀՀ Գլխավոր դատախազության քրեական գործերով դատարանների վերահսկողության բաժնի պետ, գեներալ-մայոր Արմեն Աշրաֆյանը բոլորեց ճնշոյան **60-ամյակը:**

Լուու մարզի Լեռնապատ համայնքի պատվավոր քաղաքացի օրերս այցի էր եկել ճնշոյավայր և մեկնելիս ՀՍԻԿ-ի գրադարանին նվիրեց իր նոր՝ **«Դատարաններում քրեական գործերով արդարադատության իրականացումը որպես դատական իշխանության հիմնական գործառնություն»** (Երևան, 2006թ.) գիրքը: Արդարադատությանն ու իրավունքին, անկախ դատական իշխանության կայացմանն առնչվող

բազմաթիվ աշխատություններից բացի, Արմեն Աշրաֆյանը նաև բանաստեղծությունների երկու ժողովածու է հրատարակել՝ **«Ինքս ինձ հետ...»** (Երևան, 2000թ.) և **«Շրթաված ինչուներ...»** (Երևան, 2004թ.):

**Հնորհավորելով նրա հորեյանը,** ընթերցողին ենք ներկայացնում բանաստեղծությունների մի շարք և գրականագիտական այն արձագանքներից, որոնք տպագրվել են Աշրաֆյանի բանաստեղծական աշխարհին նվիրված **«Ելքի երկրորդ դուռը»** (Երևան, 2006թ.) գրքում:



*Ա. Աշրաֆյան*

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ



**Ես չեմ ծերանում...**

\*\*\*  
Ես չեմ ծերանում,  
Ես մեծանում եմ:  
Մեծանում մտքով,  
Խելքով ու կյանքով,  
Ապրում, արարում,  
Մեծանում այսպես,  
Վերջն էլ չեմ տեսնում,  
Հեռու է կարծես:

Ես չեմ ծերանում,  
Ես մեծանում եմ:  
Մեծանում խղճով,  
Սիրով, բարությանը,  
Քանգի լավ գիտեմ,  
Որ պետք է լինել  
Խիստ և ոչ թե չար,  
Ծիծաղով պոռթկում,  
Հունորով միշտ հար,  
Վերքը դարձնող,  
Ցավերը մեղմող,  
Վաղվա օրը լույս  
Տեսնող ու գտնող:

Ես մեծանում եմ,  
Իմանալով, որ  
Կյանքի բարդ թուղում  
Պետք է շտապել,  
Այլ պետք է արագ  
Ու հմուտ գործել:

Ես չեմ ծերանում...  
Հծերանալու գաղտնիքներ շատ կան,  
Ներքի, բոլորը չեմ կարող ասել,  
Քանի որ կյանքի հունը կփոխվի,  
Ու երևի թե իմաստն էլ կորչի:

Ես չեմ ծերանում,  
Ես ընդամենը կյանքով եմ ապրում,  
Գաղտնիքը ընկալում,  
Ու լույս մեծանում:

\*\*\*  
Թեկուզ մի վայրկյան,  
Երբ չեմ տեսնում քեզ,  
Կամ երբ չգիտեմ ու՛ր ես և ինչու,  
Վայրկյանն այդ անգույթ  
Ինձ դար է թվում,  
Սիրոս մնլվում, կյանքը քարանում,  
Իսկ աշխարհը ողջ՝ իսպառ դատարկվում:  
Ես չեմ իմանում,  
Թե իր մեծությանը,  
Պահն է ավելի,  
Թե՛ մի վայրկյանը,  
Բայց որն էլ լինի  
Հավերժություն է կարծես թե դառնում,  
Երբ իմ կողքին չես ու քեզ չեմ տեսնում:  
Թեկուզ մի վայրկյան,  
Կամ թեկուզ մի պահ,  
Քեզնից անտեսյակ իրավիճակում,  
Ապրել ու չնչել չեմ կարողանում:  
Իսկ ավելի ճիշտ՝  
Ապրելն իմաստն է կարծես կորցնում,  
Ու քեզնից գատված  
Ամենափոքր ժամահատվածում  
Իմ հոգեվարքի պահերն են զգում:

\*\*\*  
Հոգմե՛լ եմ արդեն  
Շրթաված, մռայլ օրերի պարից,  
Մտտիկ ու հեռու  
Մարդկանց պարզված հոգեքի բեռից:  
Ուրիշի հոգում ժպիտ ծնելու  
Մաքառումներից,  
Ուրիշի վերջի ցավի մրմուռի  
Հառաչանքներից  
Հոգմե՛լ եմ արդեն:

Հոգմե՛լ եմ արդեն  
Ուրիշի համար մոմեր վառելով,  
Սիրոս ու կյանքս  
Առանց զղջալու միշտ նվիրելով,  
Արհավիրքներից հեռու պահելու  
Լուս աղոթքներով,  
Այլոց մեղեքին մեղա կանչելով  
Հոգմե՛լ եմ արդեն:  
Ես էլ չեմ կարող,  
Ոչինչ չեմ ուզում՝  
Հոգմե՛լ եմ արդեն ...

\*\*\*  
Իմ մի բուռ արև,  
Այսօր գլխահակ  
Հոքեցի կրկին  
Սրտիդ ծանրացած  
Շիկացած հողին:  
Թեկուզ լավ գիտեմ,  
Որ հեծծանքը գաղտնի ես պահել,  
Ու այնքան լռիկ որք ու աղոթքը  
Գիշերն ես երգել,  
Որ ես չլսեմ,  
Թեկուզ լավ գիտեմ,  
Որ ժպիտներիդ մաղթանքից հետո,  
Նոր միայն լացով



**Իմ մի բուռ արև...**

Ինքը քեզ սիրով հագուրդ ես տվել,  
Որ ես չտխրեմ,  
Ամեն ինչ գիտեմ...  
Բայց ներիդ, Հոգի՛ս  
Խռոված սիրոս մուլեգնեց այսօր,  
Դրա համար էլ  
Ուխտավորի պես չոքեցի սրտիդ,  
Ու մրմունջով մի այսօր ողջունում:  
Իմ մի բուռ արև...  
Ես գիտեմ, որքան ջերմ է հոգին քո,  
Դրա համար է հողը շիկացել:  
Հողմերի մանր,  
Հավածել ես միշտ  
Թախծոտ աչքերի խոտերը բոլոր,  
Որ միշտ լույս սփռեմ  
Ու արև տեղանք,  
Դրա համար է,  
Որ գլխիդ վերև օրորվող վարդը  
Էլ արցունք չունի:

Իմ մի բուռ արև,  
Խռոված սիրոս այսօր մուլեգնեց...  
Դե խոսիր, ասա,  
Այդ ե՛րբ կլինի,  
Ե՛րբ սրտիդ երագ մրրիկը կգա,  
Որ արևի ջերմ ցուլքերը փակող  
Ու արեալաբեր ամպերին բոլոր  
Շանթախար անի,  
Որ դեռևս բորբ արևից սնվող  
Լուսի շավիղներն այս հզորանան,  
Բարձրաճան վերև,  
Ու դառնան քեզ պես  
Մի բուռ ջերմ արև:

\*\*\*  
Մորս խոսքը քանց պատգամ եմ  
փայլալույս,  
Որն իմաստուն ու հանճարեղ է մնում.  
«Չարության դեմ քո վրեժը, միշտ հիշի՛ր,  
Լավ գործով ու բարությունով հատուցիր»:

\*\*\* **Հորս հիշատակին**  
Միշտ վախեցել եմ քո մասին գրել,  
Ստածելով, որ չեմ կարող ասել՝  
Քո հայրական ջերմ հովանու ներքո,  
Այն, ինչ զգացել ու վախել է եմ:  
Ինչ էլ որ ասեմ, ինչից սկսեմ,  
Ուժդ, կարողդ, սերդ երգելու,  
Փշրանք է դառնում քո վեհության դեմ,  
Իսկ խղճուկ փորձս՝ հիասթափություն:  
Հայ՛ր, դու ո՛ր մեջ ես, ի՞նչ երկունքն ես,  
Իսկ ես սուլերդ՝ քեզնից անբաժան,  
Որ քո հասակից ձգվող առ Աստված,  
Սկիզբ եմ առել ու քեզ շղթայվել:  
Դու հայր չես եղել բուռնցով կրպիտ,  
Ու խոսքդ հուժկու չի թրատել ինձ.  
Մե՞ք մեծ ու փոքր ընկեր ենք եղել,  
Ե՛վ դու միշտ փոքրի պես ես քեզ պահել:  
Խորհուրդ ես հայցել և խորհուրդ դարձել,  
Ու կյանքն ինձ համար իմաստավորել,  
Ե՛վ այդ նույն կյանքիս հարցազնուներում  
Բարություն բերող իմ կուրծքն ես եղել:  
Ապրած օրերիս առեղծվածներում  
Ամհաջողության վախից տագնապած՝  
Երբ քո բախտից եմ ասել ու գործել,  
Իմ հաջողության դռներն են բացվել:

## ԱՆՉՈՒԿ ՈՒ ԱՆԿԱՏԱՐ ԿՅՆՔԻ ԱՆՊՐԱՎՐՈՒՄԵՐ

Արմեն Աշրաֆյանի «Ինքս ինձ հետ...» ժողովածուն հիմնականում ներառում է հեղինակի երիտասարդ տարիների բանաստեղծությունները: Դրանք մտերմիկ զըրույցներ, խստեր ու մտորումներ են անձի և նրա ճակատագրի շուրջ, որ մերթ ծավալվում են՝ իբրև հուշի պատասխիկներ, մերթ ամփոփվում են առանձին պատկերների ու հուզական վերապրումների մեջ:  
Հեղինակը գրողուն է ինքն իր հետ՝ իր ճակատագրի անդրադարձը փնտրելով տարիների հուշվություն, դեպքերի և իրադարձությունների շրջալույս:  
Իսկ «Շրթաված ինչուներ...»-ը հեղինակի բանաստեղծությունների երկրորդ ժողովածուն է:  
Բանաստեղծությունների այս ժողովածուն հուշապատմություն է մարդու մասին,

ուր իրար են միանում կենսական ակունքներից եկող վերապրումներն ու խոհական ներտուգումները, անցյալը, գալիքն ու առօրյան, ուր կանգնած է խորհող ու երագող մարդը՝ հեռացող ու մոտեցող օրերի և ճանապարհների ճամփաբաժանին: Անեզրական կարոտի ու անանճնական սիրո այդ լուսաթիթն է, որ շրջապատում է մարդուն, տանում է նրան իր գոյության խորհրդի ետևից, և այս նուրբ թելերով է հեղինակը փորձում հյուսել իր կյանքի պատմությունը, յուրովի վերափմաստավորել իր կենսափորձը, ուր կան նաև դրամատիկ շեշտեր, որոնք նույնպես մարդկային անցողիկ ու անկատար կյանքի անդրադարձեր են:

Հրայր Թամրազյան

## «ԻՆՉՈՒՒՆՆԵՐ» ՊԱՏԱՍԽԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

Յուրաքանչյուրիս կյանքում լինում են, կան հանգրվաններ, երբ կուտակված, արդեն որոշակի կրիտիկական զանգվածի հասած կենսափորձի պարտադրանքով կանգ առնում ու փորձում ենք բյուրեղացնել, բանաձևի բերել տվյալ կենսատարածքում մեր ապրած-զգացածը...  
Արմեն Աշրաֆյանի «Շրթաված ինչուներ...» ժողովածուն արդեն երկրորդը լինելով՝ հիմք է տալիս «կասկածե՛լ», որ հեղինակը որպես կենսապատումը բանաձևելու «գործիք» է ընտրել բանաստեղծությունը, ինչը պայմանավորված է ոչ միայն նրա՝ աշխարհի ու կյանքը հենց այդպես ապրելու կարողությամբ, այլև իմացության այն իրողությամբ, որ հենց բանաստեղծությունն է ամենատեղն ու նույնքան էլ տարրուճակ բանաձևումի հնարավորությունը...

Արդեն իսկ ակնհայտ է, որ Արմեն Աշրաֆյանի տարերքը խոհն է, խորհրդածություն, որտեղ իրեն կատարելապես ազատ ու անկաշկանդ է զգում՝ միևնույն ժամանակ սրբերով պահելով ճշմարիտ բանաձևումի գլխավոր պայմանը՝ բացարձակ անկեղծությունը, առանց որի ինքնաբացահայտման այս միջոցը վերածվում է գեղեցիկ, բայց փուչ բառախյուսաբ...  
Արմեն Աշրաֆյանը բացում է նաև իր կյանքի ու ստեղծագործության մյուս շերտերը, նշակետում այն կենսական լիցքեր, որոնցով շուրջ ու համայնք են ստանում իր խոհածությունները՝ սերը, կարոտը, կորուստները, հավատարմությունն ու դավը, մարդկային մեծ մտերմությունները...

Ներսես Աբարեկյան

# ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ- 80

Անդրադառնում ենք հայ պատմավիպագրության երջանկահիշատակ նվիրյալ ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ 80-ամյակին (ծնվել է 1926-ի դեկտեմբերի 15-ին, Լեռնային Ղարաբաղում): Նրա ստեղծագործությունների վերնագրերն իսկ բավական են, որպեսզի ազգային պաշտամունքի նորոգյա խորհրդով հառնի մեծ մտավորականի կերպարը. «Տիգրան Մեծ», «Էրեբունի», «Արտավազ», «Արտաշես», «Քերթրուհայրը»...

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում նրա «Հայկական օրացույցների և տարեցույցների մատենագիտություն. 1513-1973» աշխատությունը և հայրենագիտական պատումաշարերը: Նոր սերնդի թերիմացությունը լրացնելու նպատակով անհրաժեշտություն ենք համարում պարբերաբար հատվածներ ներկայացնել ինքնատիպ գրող-հետազոտողի «Հայկական տեղանվանապատում»-ից (նախկին վարչագրությանը):



Լաւնեն:

Շատ ժամանակներ անցան: Ախորժահան անունն աղավաղվեց, դարձավ Ախուրյան, բայց ջուրը չզովալվեց:

## Ա Կ Ն

1022 թվականին Սեբաստիա տեղափոխված Արծրունիները Արևմտյան Եփրատ գետի աջ ափին, գեղատեսիլ բարձունքի վրա, հիմնում են մի բնակավայր և այն կոչում Մարընտունի: Բայց այդ անունը երկար չհնչեց: Մի դար հետո Աճի քաղաքից շատ հայեր են գաղթում այստեղ և սկսում տուն-տեղ կառուցել: Ջարմանակի բախտ ունեն այս անցյալները: Սրանց և հաջորդությունն է շատ լինում, և ծախսորդությունը: Եփրատի աջափնյա բարձունքի վրա ինչ տեղ բլուրդ էին խվում շենքի հիմնափոսի համար ակն էր ժայթքում:

Էլ ինչ Մարընտունիկ,- ասացին մարդիկ,- ներքևում ակն, լացեթի՛ն ակն, վերևում ակն, սա ակն է, ակն:  
Եվ Աճ կոչվեց նորակառույց քաղաքը, որ հետո դարձավ նոր Գողթն, հայոց համաճարեղ հայրենների ուստան: 1930-ական թվականների թուրքերը Աճը կոչում են Քեմալիե:

## Ա Կ Ն Ա Լ Ի Ճ

Աճն լիքը գտնվում է Հայկական ՍՍՀ Արավանի և Կամոյի շրջանների սահմանագլխին, Գեղամա լեռնաշղթայի կատարային սարավանդի վրա: Ոչ ոք չի հիշում, թե երբևիցե Աճն լույս էր կոչվում: Հայոց աշխարհի լճերի ամունների ծրուհունները ավելի խորն են խրված անցալում, քան իրենց լճերը, երկրի դարուփոսներում: Գեղամա երկրում մի գեղունի էր ապրում Աճն անունով: Սա մի մասանի ունեթ, որ տասներկու ժամ լույս էր տալիս, տասներկու ժամ մթնում: Տոնակալան գոհար էր, որ տատից թռո, բոռից ծոռ անցնելով հասել էր Աճին: Աշխարհում գիշեր ու ցերեկ լինում էր այդ մաստան շնորհիվ:

Աճը սիրում էր Գագ պատանուն, շատ էր սիրում: Ուր որ է նրանք պետք է մարդ ու կին դառնային: Սակայն մի անգամ Գագը Աճին ասաց.

-Գիտես, Աճն, ես մի հնար են գտել:

-Ի՞նչ հնար:

-Քո մատանի համար մի այնպիսի պատյան են սարքել, որ այն լույս տա միայն ինձ ու քեզ:

-Իսկ մնացած մարդիկ:

-Ռո՞ղ մնան մթության մեջ: Ես չեմ հանդուրժի, որ իմ կնոջ մատանին լուսավորի նաև մյուսների օրը:

-Ու համաձայն ես, որ աշխարհը մնա մթության մեջ:

-Այո, ես ու դու երբ ուզենանք գիշերը ցերեկ կարծենք, ցերեկը գիշեր:

-Ես թե՛ք մնա մարդու կին չեմ դառնա,- ասաց Աճը և, մատանին շարտեց դեպի երկինք, որ արեգակ դարձավ և մինչև այժմ գիշեր ու ցերեկ է ապարում բոլոր մարդկանց համար:

Գագազած Գագը ընկավ աղջկա հետևից, բայց չկարողացավ բռնել: Աղջիկը լեռան կատարից իրեն նետեց ցրի մեջ: Եվ աղջկա անունով այն կոչվեց Աճն լիք:



քարի վրա չէին թողնի: Եվ անհ գյուղի կանայք գտան բոթը իրենց այրերին իմաց տալու հնարը: Նրանք սկսեցին կրակ տալ գյուղի խոտի դեզերը: Հրոսակապետին թվաց, թե դա իր գորականների արածն է: Շուտով դեզերը դարձան հրե սյուներ: Դա նկատեցին Նիզակ սարի վրա գտնվող տղամարդիկ և շտապեցին օգնության հասնել յուրաքանչյուրին:  
Միայն թե ինչու է գյուղը Ազո կոչվել:

## Ա Ժ Դ Ա Յ Ա Կ

Այս գրույցի տուտը մնացել է յոթ անգամ յոթ դարի թիկունքում: Հարավի անպատներից Հայաստան էր մտել Ածդահակ կոչվող եռագլուխ մի վիշապ օձ, որ չէր հագնում ջրից: Ուր հասնում էր ցամաքեցնում էր գետ ու աղբյուր, լիճ ու առու: Հայոց աշխարհի հյուսիս այսպես ծծելով վիշապը շարժվեց դեպի Սևանա լիճ: Ածդահակի համար Սևանն ինչ էր որ, մի անավա ծարավը հագիվ հագեցներ:

Բայց հայոց աստվածների հայր Արամազդը չբողեց, որ ամենակու վիշապը մոտենար Սևանին: Երբ Ածդահակը հասավ Գեղամա լեռներից, Արամազդը ուժգին փնջացրեց և վիշապի չորս բոլորքը ծածկեց ձյունով: Մինչ այդ ձյուն չտեսած Հայոց աշխարհում սաստիկ ցուրտ էր ընկնում: Վիշապ օձը խղաբար փրշալ, բայց չկարողացավ սողալ ձյան վրա: Երկրորդ անգամ փշշաց և շունչը փչեց:

Հենց այդ ժամանակվանից էլ Գեղամա լեռնաշղթայի ամենաբարձր գագաթը, որտեղ իր շունչը փչեց վիշապը, կոչվեց Ածդահակ: Այդ լեռը գտնվում է Հայկական ՍՍՀ Արավանի և Կամոյի շրջանների սահմանագլխին:

## Ա Լ Ա Շ Կ Ե Ր Տ

Հայոց աշխարհի ամենաբարձր մակարձ ծաղիկներն աճում են Բագրևանդի գավառում: Ջրույցն ասում է, թե այդ ծաղիկների զգլխիչ բուրմունքը ընթրշխնում էին հայոց հեթանոս աստվածները, որոնք օր ու մեջ հայտնվում էին Բագրևանդում:

Երկրորդ դարում Հայոց Վաղարշակ էր սկզբում դարձրին Վաղարշակ, հետո էլ սերմեցին այս Վաղարշակը ու վերջնականապես կոչեցին Ալաշակերտ: Այդպես կոչվեց ոչ միայն քաղաքը, այլև Բագրևանդի ամբողջ դաշտը:

## Ա Լ Ա Փ Ա Ր Տ

Մեկի աղավաղածը ժողովուրդը շտկում է մի ակնթարթում, իսկ ժողովրդի աղավաղածը չեն կարողանում շտկել

## Ա Գ Ո Լ Լ Ի Ս

Հին գրույցն ասում է, թե հայոց Գողթն գավառի Ազուլիս քաղաքի պորտը կապել է Նոյ Գահապետը: Մեծ ցրիեղիցից հետո Նոյն իջել է Մասիսի կատարից, նախ և առաջ հիմնադրել Նախիջևան քաղաքը, ապա առաջ շարժվելով հասել Գողթն: Այստեղ կանգնել է մի բլրի վրա և զանազան պատուհների մի բուռ հուճեղեր շարտել ձորահովտով մեկ:

Հետո Նոյն իր ճանապարհը շարունակել է դեպի Կապուտան ծովակը: Մի քանի տարի անց իր տոհմաշրջաններից մեկին ուղարկել է Գողթն ու ասել.

-Գնա, տես ի՞նչ դարձան իմ ցամաօ պտղասերները:  
Բանքերը եկել է Գողթն և տեսել, որ Նոյի հուճեղերը ծարձակել են և ձորահովտը լցրել փարթած ալյուրներով: Վերադարձել է և հայտնել, որ երբեմնի ամայի ձորահովտը այժմ ալյուրներով լիքն է:

Ասում են, Նոյի ժամանակներից էլ այդ վայրը կոչվել է Ալյուրներով լի: Հետագայում անունը հնչյունափոխվել է, դարձել Ազուլիք, ապա Ազուլիս:

## Ա Զ Դ

Արևմտյան Հայաստանի Սեբաստիա քաղաքի հարավ-արևելյան կողմում Ազո անունով մի գյուղ է եղել: Դե, ամենքդ էլ գիտեք, որ ազո նշանակում է լուր: Մեր հներն ասում էին ազո առնել, այսինքն՝ լուր տալ, իմաց տալ, ազդարար լուր տրվող: Իսկ ինչպե՞ս եղավ, որ գյուղն ստացավ Ազո անունը:

Դա եղել է հազար տարի առաջ: Թշնամին հանկարծակի գյուղ ներխուժեց և սկսեց կողոպուտը: Հակառակի պես օրը տոնական էր և ինչպես այդ, այնպես էլ հարևան գյուղերի այրերը զինավարժական մրցությունների էին մեկնել Նիզակ բարձրիկ սարը, որը շատ էլ հեռու չէր գյուղից: Բայց ինչպե՞ս իմաց տաս նրանց: Մինչև մեկը Նիզակ սար հասնել ու հետը գրավական ուժ բերելը շատ ժամանակ կանցներ: Իսկ մինչ այդ ասպատակողները ձորահովտի գյուղերում քարը



